Ես մարդ եմ: Ոչ մի մարդկային բան խորթ չէ ինձ համար: Եթէ դու ճիշտ ես, ես կ'անեմ այն, ինչ որ դու ես անում: Եթէ դու սխալ ես, քեզ ճիշտ ուղղութեան վրա կը դնեմ:

Թերրենց

Եթէ դու չես կարողանում լիովին ոչնչացնել վատ մտքերը կամ չես կարողանում գործ չունենալ արմատացած արատների հետ այն հաջողութեամբ, ինչպէս որ դու կը ցանկանայիր, ապայ դա պատճառ չի, որպէսզի [դու] ընդհանրապէս հրաժարուես հասարակական կեանքից: Դու չես կարող փոթորիկի ժամանակ լքել նաւը միայն այն պատճառով, որ չես կարողանում կառավարել քամիները:

Միւս կողմից, անիմաստ է փորձել արտայայտել բոլորովին նոր գաղափարներ, որոնք ակնյայտօրէն ոչ մի ազդեցութիւն չեն թողնի այն մարդկանց վրայ, ովքեր դէմ են այդ գաղափարներին:

Քանզի ոչինչ չի լինի կատարեալ, մինչեւ մարդկութիւնը չը հասնի կատարելութեան, ինչն իմ կարծիքով բազմաթիւ տարիներ կը պահանջի: Աւելին, դա ուտոպիա է: (1516)

Ձեր մտապատկերը յստակ կը լինի միայն այն ժամանակ, երբ դուք նայէք ձեր սրտի մէջ:
Ով դուրս է նայում, նա երազում է:
Ով ներս է նայում, նա արթնանում է:

Ինգ

Յաճախակի եւ շատ ծիծաղել, արժանանալ խելամիտ մարդկանց յարգանքին ու երեխաների սիրուն, գնահատուել անկեղծ քննադատների կողմից եւ յանդուրժել կեղծ ընկերների դաւաճանութիւնը, գնահատել գեղեցկութիւնը, ուրիշների մէջ գտնել լաւագոյն կողմերը, մի քիչ բարելաւի աշխարհը, թերեւս երեխայով, այգով, կամ բարելաւուած հասարակական միջավայրով, գիտենալ, որ քո շնորհիւ ինչ-որ մէկի հոգսը թեթեւացել է՝ սա է հաջողակ լինելը:

Ռալֆ Ուալդո Էմերսոն

Փիլիսոփա լինելը պարզապէս սրամիտ լինելը չէ, եւ ոչ էլ դպրոց հիմնելը, այլ սիրել իմաստութիւնը՝ ապրել իր թելադրանքերին համապատասխան՝ պարզ կեանքով, անկախութեամբ, մեծահոգութեամբ եւ հաւատով:

Մեր կեանքը վատնւում  է մանրուքների վրայ:

Եթէ մէկը վստահօրէն առաջ է գնում իր երազանքների եւ ցանկութիւնների ուղղութեամբ, ապրելով իր երեւակայեած կեանքով, նա անակնկալ պահին կը հասնի յաջողութեան:

Ես կը գերադասէի ազատօրէն մենակ նստած լինել դդումի վրայ եւ ունենալ դդումն ամբողջութեամբ, քան նեղ նստած թաւշէ բարձի վրայ: Եթէ մարդ չի հասցնում քայլել իր ուղեկիցների հետ համաչափ, հաւանաբար դա նրանից է, որ տարբեր թմբկահարների է լսում: Թող նա քայլի իրեն հարազատ ռիթմով ինչքան էլ որ այն հեռուից գայ կամ ինչ ռիթմով էլ այն լինի:

Ես չեմ եկել այս աշխարհ, որ այն դարձնեմ լաւ ապրելավայր, այլ՝ որպէսզի պարզապէս ապրեմ այստեղ՝ լինի դա լաւ թէ վատ: Մարդն ամէն ինչ չէ, որ պէտք է անի, այլ ինչ-որ մի բան. եւ քանի որ նա չի կարող ամէն ինչ անել, սա պատճառ չի, որ նա ինչ-որ վատ բան անի:

Կենդանի շունն աւելի լաւ է, քան սատկած առիւծը: Պէ՞տք է, որ  մարդ գնայ եւ կախուի միայն այն պատճառով, որ նա գաճաճների ցեղից է, եւ չձգտի դառնալ նրանցից մեծագոյնը: Թող իւրաքանչիւրը զբաղուի իր գործով, եւ փորձի դառնալ այն, ինչը որ ստեղծուել է:

Ինչքան էլ նուաստ է ձեր կեանքը, ընդունէք եւ սիրէք այն: Մի խուսափէք դրանից եւ մի դժգոհէք: Այն այնքան վատը չէ, ինչքան որ դուք էք վատը: Այն աղքատ է թւում, երբ դուք հարուստ էք: Դժգոհը նոյնիսկ դրախտում թերութիւններ կը գտնի: Սիրէք ձեր կեանքը, ինչքան էլ այն աղքատ լինի: Դուք նոյնիսկ աղքատանոցում  ապրելիս կարող էք  ունենալ որոշ հաճելի եւ փառահեղ պահեր:

Թորո